1756
RG.

175642.

# ԳԻՐՔ

Աղօթից

Աստուածային Սրբոյն

Նարեկացւոյ:

Եւ Տպագրե-

ցեալ Հրամա-

նաւ Իմաստաբան

Պատրիարգին

Կոստանդնուպօլ-

սոյ՝ Տեառն

Յակոբայ:

Ի թուին՝ 1196:

1756



Աղօթք Սրբոյ Հօրն Եփրեմի
Առ Միածին Բանն և Որդի։

ԳՐԱԴԱՐԱՆ
— ՀԱՅԳԻՏԱԿԱՆ —

* Աղօթք զօրաւոր Սրբոյ Հօրն
Գրիգորի՝ Նարեկացւոյն Առաքելոյ:

* Աղաչական խօսք ընդ Այ:

(Ա)

ՏԵՍԱՆ Օ. ՏՐ
ապականս իմ և ըղ
ցանս հոգւոյ իմոյ
3 բազ

բազմամեղիս · դա՛րձ՝ ներեա՛
և՛ ի քեզ առաջնորդեա՛:
Որ ասացեր՝ դարձարո՛ւք ա_
ռ իս, և ես դառնամ առ ձեզ:

(Ի)

Ինձ լքելոյս ողորմեա՛ · ինձ
եղկելւոյս օգնեա՛ · ինձ
խաւարելոյս ճառագայթեա՛ ·
ինձ մոլորելոյս առաջնոր_
դեա՛ · որ լի՛ եմ մեղօք և
անթի՛ւ յանցանօք · և՛ի յոր
ձանս անօրէնութեան տարա_
բերեալ ծփիմ:

(Լ)

Որպէս պետրոսին ձեռնար_
կեա՛

կեա՛ց. գոչեմ որպէս մաքսա-ւորն արդարանալ։

(Գ.)

Շնորհեա՛ ո͞վ զաւազակին բա՛ց ինձ ըզդուռն կենաց ճանապարհին և մեծ արքու-նական առագաստին.

(Դ.)

Ո՛վ խորք մեծութե՛ և իմաս-տութե՛. կա՛լ զըմբռնեալս՝ որ 'ի խորս ծովուն անկեալ եմ մեղօք. զերծո՛ և զօրացո՛ զիս առնել զկամս քո. սրբեալ և լալ 'ի տուէ՛ և 'ի գիշերի զա͞մ անօրէնութի՛ և զհեղգութի՛ս իմ։

(Ջ.)

Աղբիւրդ կենդանութեան՝ արբո՛ զծարաւ հոգիս իմ յաստուածային վտակէ քում մէ․ որ պապաքեալ տոչորիմ՚ի բազում անօրէնութեանց իմոց, խղճեա՛ ՚ի քարացեալ սիրտ իմ․ և հա՛ն ինձ արտասուս ապաշխարութեան։

(Ռ.)

Պանծալդ իմ բարութեանց․ շնորհեա՛ ինձ դանկի միոյ չափ ՚ի բազում քո առատ բարեացդ՝ որ չարաչա՛ր եմ աղքատացեալ և մերկացեալ․



Զգե

զգեցո՛ և կերակրեա՛ զիս ար տասուօք ապաշխարութե՟ն։

(Ը)

Լոյս Ճշմարիտ Քս՟՝ որ լու սաւորես զա՟մ մարդ՝ լու սաւորեա՛ զխաւարեալս մե ղօք. բա՛ց զաչս սրտի իմոյ. և հաստատեա՛ յերկիւղ և ՚ի սէր պատուիրանաց քոց։

(Թ)

Մի՛ դատեր. և մի՛ դատա պարտեր զիս տ՟ր ըստ ան բաւ զաղէր գործոց իմոց. և մի՛ կացուսցես զիս՛ ընդ այլոն՝ որք զայրացուցին ըզ



քեզ

քեզ. այլ ընդ փառաւորեալսն փառաւորեա՛. եւ ընդ պսակելոցն պսակեա՛. եւ ընդ բերկրելոցն ուրախացո՛.

(Ժ)

Ցաւ է ինձ Տէր. բայց յուսամ յողորմութիւնսդ քո. զի եւ շունք կերակրին 'ի փշրանաց անկելոց սեղանոյ տեառն իւրեանց. շուն կոչեա՛ զիս Տէր՝ զի գայցեմ ըզկնի քո. Հովիւ բարի՝ խընդրեա՛ զիս զմոլորեալս. Նաւապետ բարի Յս՝ փըրկեա՛ զիս 'ի բազմութենէ



ալ

ալեաց ծովու մեղաց իմոց.
և տո՛ւր ինձ նաւահանգիստ
խաղաղութեան.

## (ԺԱ.)

Տո՛ւր ինձ Տէր սուգ. և
արտասուօք կարողացո՛ ըզ
մարմինս իմ. կակղացո՛ զքա
րացեալ սիրտս իմ. և ժողո
վեա՛ զմիտս իմ 'ի քեզ:
Զնջեա՛ զբազմութի̃ յան
ցանաց իմոց. և շնորհեա՛
ինձ զօգուտն իմ: Ընկա՛լ
և մի՛ անտես առներ զհա
ռաչանս սրտի
իմոյ.

## (ԺԲ)

Տուր ինձ իմաստութիւն. և տընկեա՛ տէր զահ և զերկիւղ քո ՚ի սրտի իմում: Լուսաւորեա՛ զխորհուրդս իմ. կարողացո՛ զմարմինս իմ ժուժկալութե՟ն կալ ՚ի պատուիրանի քում յա՟մ ժամ:

## (ԺԳ)

Բա՛ց տ՟ր զաչս սրտի իմոյ. և լուսաւորեա՛ հոգւովդ սրբով: Պարգևեա՛ ինձ առողջ խորհուրդս և առաքինի վարս՝ ողբալ հանապազ. ահի՟ւ և դողութեամբ կալ

առաջի՛ն յա՜մ ժամ անդադար։

(ԺԴ)

Ո՛վ բարերար և մարդասէր տ՜ր՝ առանց չարչարանաց և ժուժկալութեանց զիա՛րդ ազատեցայց ՚ի բազմութենէ մեղաց իմոց · զի մարմնովս տկա՛ր եմ · և հոգւովս խաւար · ողորմեա՛ տ՜ր՝ և որպէս կամիս օգնեա՛ ինձ։

(ԺԵ)

Անոխակալ տ՜ր՝ մի՛ վ՜ս բազում չարեաց իմոց անտես առներ զիս · այլ դարձի՛ր ՚ի յի՛ս՝ և դարձո՛ զա՜մ ցանկու-



թե՜

Թէ իմ 'ի քեզ. և զքեզ տուր միայն սիրել 'ի բոլոր սրտէ իմմէ: 'Ի նուաղ և յանպաճոյճ կերակրոց ամենօրջ պահեա զմարմինս իմ:

(Ժ. Օ.)

Պատկերացո՛ տէր՝ զանհրաժեշտ պաշտուստ քո առաջի աչաց իմոց. և դողացո՛ զմարմինս իմ սրգալ և լալ անդադար՝ յերկիւղէ ահեղ դատաստանաց քոց. և մի՛ փակեր զգութ արարչական սիրոյ 'ի ստեղծուածոյս քո՝ որ մեղօքս եմ մեռեալ:

 Ճշե

(ԺԸ)

Աճեցո տէր զզաւրիս գործել ինձ յամ ժամ. և խափանեա զամ չարիս ի չար մտաց իմոց. ի պիղծ և յան-ուղղայ գնացից՝ և ի չար սովորութէ դադարեցո զիս. և հաստատեա յերկիւղ և ի սէր պատուիրանաց քոց.

(ԺԹ)

Արեգակնդ արդարութեն՝ փրկիչ իմ և ազատիչ յս քս. ի լոյս քո ապաւինիմ. լուսաւորեա և ջերմացո ըզ-սիրտս իմ: Հրակիզեա զչար



խոր

խորհուրդս իմ. և հալեա՛ ըզ-
սառնամանիք մեղաց իմոց։
Շնորհեա՛ ո՛ր գարուն հո-
գւոյ իմոյ՝ ծաղկիլ և պտղա-
բերել զարդարուն պտուղն։

## (ԺԹ)

Աղօթիւք քո՛ ազատեա՛ զիս
'ի դառնաշունչ օդոց մեղաց
ձմերայնոց. զխանձարեալ և
զսառուցեալ հոգիս իմ պայ-
ծառացո՛ և ջերմացո՛. և ցօ-
ղեա՛ զցօղն շնորհի ջերմու-
թեան քո 'ի յանդաստանս
մտաց սրտի
իմոյ.

(Ի)

Շնչեա՛ որ զհարաւ քաղցրութեան շնչոյ հոգւոյդ մեյ ’ի խրատացեալ և ’ի թանձրացեալ սիրտս իմ. և զարթո՛ որոտընդոստ փայլատակմամբ քո զսառնացեալ և զցամաքեալ միտս իմ։

(ԻԱ)

Բա՛ց որ զփակեալ դուռն սրտի իմոյ. և ծագեա՛ ’ի ներքս զլուսաւորութիւն ճառագայթից քոց։ Սրբեա՛ և զաղտ մեղաց իմոց. և ըզվէրս հոգւոյ իմոյ բժշկեա՛։

Ամրացո՛ երկիւղին քո եւ զօրացո՛ առնել զարդարութիւն յամենայն ժամ։

(ԻԲ)

Աղբերացո՛ տ՟ր զգլուխ իմ ՚ի բղխումն արտասուաց· լուա՛ զթարախ հոգւոյ իմոյ· սրբեա՛ զզգայարանս իմ։ Եւ զգործօղս չարեաց՝ փոխարկեա՛ ՚ի զղջումն ջերմ սիրոյ քո՝ զգաստ մարմնով կեալ ՚ի պատուիրանի քում։

(ԻԳ)

Ձգեա՛ տ՟ր զձեռն քո ՚ի նաւաբեկեալս՝ որ ընկղմեալս

եմ՝ ի խորս չարեաց. փրկեա՛
զիս ՚ի սաստիկ ծովածուփ
բռնութէ մեղաց իմոց ալեաց։
Անձեա՛ Տէր և կիրկեա՛ զխստ
երախտ միտս իմ՝ ի զբաղմանց
և ունայնութեանց կենցաղոյս։

(ԺԶ.)

Ոռոգեա՛ Տէր զծարաւ հոգւոյ
իմոյ յաստուածեղէն շնորհէ
քումմէ. և մի՛ անտես առ-
ներ զտոչորումն սրտի իմոյ։
Պապակիմ՝ ի տապոյ չարեաց
իմոց. զովացո՛ և լո՛ւա զապա
կանեալ և զհոտեալ շրթունս
իմ ջրով ողորմութեան քո։

# (ԻԱ)

Ծագեա՛ տէր զուրախու
թիւն և զխաղաղութի՟
շնորհաց քոց ՚ի սրտի իմում։
Եւ զցաւագին գիշեր մե
ղաց՝ ՚ի մըտաց իմոց հալա
ծեա՛. և մարմնոյ իմոյ շնոր
հեա՛ զարիական վարս՝ առա
քինութե՟ կեալ ՚ի հաճոյս
կամաց քոց։ Եւ հա՛ն ըզ
փուշ մեղաց ՚ի սրտէ իմմէ.
զի հոգի իմ չարաչար վիրա
ւորի. և սերմանեա՛ սերմն
բարի ՚ի սրտի իմում աճե
ցուցանել և պտղաբերել
զարդարութե՟ պտուղն։

 Տա

(ԻԶ)

Հալածեա՛ տ՟ր զխաւար 'ի
Հոգւոյ իմոյ. և զգեցո՛ 'ի լոյս
արդարութե՟ ճառագայթից
քոյ։ Զարդարեա՛ երկիւ
ղիւ՟՝ զղջմամբ և արտասուօք
զսիրտ իմ. երկնչիլ 'ի դա
տաստանաց քոյ և պաՀել
զա՟մ պատուիրանս քո։

(ԻԷ)

Զարթո՛ զիս տ՟ր յաՀագին
խորութենէ քնոյ մեղաց. և
զտարակուսեալ մարմինս իմ
զգաստացո՛ յա՟մ գործս բա
րիս. խորՀիլ միշտ մեծաւ եր

 կիւ

կիւղին, և առնել զհաճոյս
քո յամենայն ժամ։

(ԻԲ)

Ազատեա՛ զիս Տէր ՚ի ծառայ
ութենէ մեղաց. և խառնեա՛
՚ի թիւս ծառայից քոց՝ որք
սիրեցին զքեզ և զպատուի
րանս քո պահեցին. տո՛ւր
զերկիւղն քո ՚ի սրտի իմում.
և ուսո՛ զիս գնալ ՚ի շաւիղս
գնացից նոցա։

(ԻԳ)

Թեթևացո՛ զկարիս մարմ
նոյ իմոյ. և յաճախեա՛ յիս
զշնորհս հոգւոյդ սրբոյ՝

 լի

լինիլ տաճար և բնակարան
ածային կամաց քոց.
Անյագ սիրով սիրել զքեզ
և ատել զամ ցանկութիւնս
և զսէր աշխարհիս այսորիկ.
որով եղև կորուստ և ան-
ցումն հոգւոյս.

(Լ)

Ողորմեա տր յանմարդա-
բնակ անապատիս. և՚ի ձեռն
սորին արժանաւորեա զիս
խառնիլ ընդ առաջին սբ հա-
րանցն՝ արի և զգաստ ժուժ-
կալութեամբ ժառանգել
զխոստացեալ պարգևսն.

 Առաջ

(ԼԱ)

Առաջնորդեա՛ ինձ տէր ՚ի
նեղ և ՚ի նուրբ ճանապարհն.
որով առաջնորդեցեր սրբոց
քոց. և զօրացո՛ զտկարութիւն
իմ ժուժկալութեամբ և համբե
րութեամբ գնալ ՚ի ճանապարհն
քո ջերմեռանդ սրտիւ։

(ԼԲ)

Նայեա՛ց տէր ՚ի նեխեալ և
՚ի թարախեալ հոգիս իմ. և
լուա՛ աստուածային ջրով։ Հոգե
ւոր աղիւդ համեմեա՛. և
անուշահոտ իւղովդ սրբով
օծեա՛. և զկատարեալ ա
ռողջութիւն ընձեռեա՛։

(ԼԳ)

Նօսրացո՛ տէր զքուն աչաց իմոց և թափեա՛ զնիրհումն ՚ի գլխոյ իմոյ. զի ծանրացեալ դանդաղանօք՝ պաշարէ ըզ մարմինս իմ։ Արա՛ զիս տէր արթունս և պատրաստ յամ ժամ. զի զգաստութեամբ և արդարութեամբ վարեցից զկեանս իմ։

(ԼԴ)

Տե՛ս տէր զլքումն որովայնի իմոյ որ զօրացեալ է ՚ի վերայ իմ. հանապազ ցանկայ կերակրոյ և ըմպելւոյ՝ և համեղութեան խորտկաց. այլ դու տէր յամի



կա

կարօղ՝ կորեա՛ զցանկութիւն
մարմնոյս տենչանաց։

(Լ՟Ե՟)

Ս՜ քանզի միտք իմ ցնդե̃լ պղտորեալ բանդագուշեալ շրջի 'ի հոսանս երկրաւոր կենցաղոյս. այլ դու տ̃ր լուսաւորեա՛ զաչս հոգւոյս առանց զբաղմանց եւ երկմտութեանց՝ արի և զգաստ ամենայորդոր փութով գալ զհետ ա̃ծային սիրոյ քոյ։

(Լ՟Զ՟)

Հալածեա՛ տէր զա̃մ չար մտածմունս երկրաքարշս

’ի խորհրդոց մտաց իմոց ․
արմատ բարեաց տնկեա՛ հաս
տատութի՛ ’ի սրտի իմում ․
և պտուղ շնորհաց ’ի հո՜
գիս իմ նկարեա՛ ։

(ԼԱ)

Աղաչեմ բա՛րերար և ողոր
մած տէր՝ արթունս և զուար
թունս պատրաստեա՛ զիս ․
ուսո՛ ինձ գնալ ’ի ճանապարհս
քո բարի ․ զի արժանի եղէց
մեծի փառաց քոց ։

(ԼԲ)

Ես քանզի ցանկութի՛ ճա
շակման՝ ամենայնի՛ զբաղե

 ցու

ցուցանէ զմիտս իմ. արդ՝
հալածեալ զորկորստութիւն
յինէն՝ յորմէ խաբեցայ
միշտ. և կերակրեալ զիս եր
կիւղիւն քով սրբով։

(ԼԹ.)

Առաքեալ տէր զմի 'ի սերով
բէից քոց՝ բերելով կայծակն
հրոյ՝ մերձեցուցանել 'ի շրթ
թունս իմ. և հանցէ իբաց
զանօրէնութիւն իմ. և զմեղս
իմ սրբեսցէ. և զխորհուրդս
իմ մաքրեսցէ. և զաղտեղու
թիւն իմ ջնջեսցէ. և լուսաւո
րեսցէ զմիտս իմ, ժառանգել
նոյնաւ զկեանսն յաւիտենից

(ԽԶ)

Առաքեա՛ տէր զբաժակ ուրախարար հոգւոյդ սրբոյ ՚ի յեղկելիս՝ որ ծարաւիմս առ քեզ. արբո՛ և զուարթացո՛ զեռանդն սիրոյ քո. լո՛յծ և իբա՛ց ջնջեա զմրուր դառնութեան յանցանաց իմոց:

(ԽԷ)

Առաքեա՛ տր զլոյս քո. և լուսաւորեա՛ զմիտս իմ և ըզխորհուրդս իմ լուսով գիտութե քո. զխաւար մտաց իմոց հալածեա՛. և զտկարութիւն անձին իմոյ կակղացո՛

 ՚ի

'ի ջանս և 'ի վաստակս հո գւոյ իմոյ։

(ԽԲ)

Առաքեա՛ տէր ըղ հրեշտակ խաղաղութեան քո վերակացու և պահապան անձին իմոյ՝ ոչ իշխանութիւն․ գնալ 'ի վե րայ իժի և քարբեի․ և կոխել զամ զօրութիւնս թշնամւոյն։ և զիս պահեա՛ տէր որպէս բիբ ական ընդ հովանեաւ թևոց քոց․

(ԽԳ)

Յորժամ երթայցեմ 'ի ճա նապարհի, մի՛ թողուր զիս միայն․ այլ առաքեա՛ զօգնա



կա

կանութիւն քո զկնի իմ,
պահելով զիս յա̃մ փորձու-
թեց սատանայի 'ի տուէ և
'ի գիշերի։ Նա՛ չտալ թոյլ
մեղանչել յողդողդ և թոյլ
մտաց իմոց. այլ կծել ըղ-
կծ իվերայ մեղաց և անօ-
րէնութեան իմոյ.

(ԽԳ)

Պահեա՛ զիս տէր 'ի բանից
և 'ի գործոց. 'ի տեսութեց
և 'ի գերիչ խորհրդոց. և
զերկիւղ դատաստանի քո
տպաւորեա՛ 'ի սրտի իմում,
անզբաղ յօժարութե̃ մտօք

 փու-

փութալ և պահել զպատուիրանս քո ։

(ԽԸ)

Փախեա՛ տր զդուռն մեղաց իմոց · և բա՛ց ինձ զդուռն լուսոյ և արդարութեան · զի երկիւղալից սիրով եկից զհետ իմոյ արարչիդ ։

Որ ասացեր՝ եկա՛յք առ իս տր աշխատեալք ։ Ահա՛ դարձեալ թէ՝ որ խնդրէ, առնու · որ հայցէ, գտանէ · և որ բաղխէ՝ բացցի նմա ։

(ԽԹ)

Նայեա՛ց տր 'ի մերկութի



ան

անձին իմոյ՝ զոր կողոպտեաց
թշնամին. և այժմ խայտա-
ռակ և անմթալից կամ ա-
ռաջի քո։ Արդաւիրեա՛ և
զգեցո՛ ինձ հանդերձ. մի՛յծ
և ուրախացո՛ 'ի կոչումն
բազմելոյ քոյ։

(ԽԱ)

Զգեցո՛ ինձ տէր զպատ-
մուճանն զառաջին զոր մեր
կացայ մեղօք իմովք. ցո՛յց
զանոխակալութիւն քո յիս.
և լուսափայլ ողորմուէ̃ քո՝
զարդարեա՛ զմերկու-
թիւնս իմ։

 Լո՛ւր

(ԽԲ)

Լո՛ւր տէր աղաղակի անա-
ռակիս՝ որ անօթում կամ
առաջի քո. զգանձ հայրենի
վատնեալ՝ սովամահ կորըն-
չիմ. կերակրիլ հաւասար
եղէ խոզից անասնոց և նը-
մանեցայ նոցա։

(ԽԳ)

Մի՛ մերժեր զիս տէր ՚ի հայ-
րենի գթոյ քո. համարձակիմ
՚ի խնամ սիրոյ քո. ՚ի ծնո-
ղէդ վերջացայ՝ և զորդիու-
թիւն իմ ուրացայ։ Հայր՝
մեղայ յերկինս և առաջի քո

չեմ արժանի կոչիլ որդի քո՛
արա՛ զիս իբրև զմի ՚ի վարձ-
կանաց քոց։

(Ծ)

Արդարեա՛ զիս տէր մե-
ծաւ երկիւղիւ քո. և դար-
ձո՛ յանառակութենէ ՚ի յար-
դարութի. յատեղութենէ ՚ի սըր-
բութի. ՚ի ծուլութենէ ՚ի զգաս-
տութի. ժուժկալութբ գնալ
՚ի ճանապարհս քո ուղիղս։

(ԾԱ)

Դադարեցո՛ զիս տէր ՚ի չա-
րաչար խորհրդոց իմոց. և
յառնելոյ զկամս մտաց իմոց

և մարմնոյ իմոյ. զահագին օր գալստեան քո տր նկարեա՛ առաջի աչաց իմոց. դողալ և սարսիլ ՚ի դատաստանաց քոց։

(ԾԲ)

Պայծառացո՛ տր զլապտեր հոգւոյ իմոյ ոպ կուսանացն իմաստնոց. և շնորհեա՛ պատրաստիլ արժանութբ՝ ընդառաջ ելանել երկնաւոր փեսայիդ. զի մի՛ մնասցուք արտաքս ոպ յիմար կուսանսն։

(ԾԳ)

Ծանո՛ տր զինձ զճանպհս քո և ուսո՛ ինձ զարդարու-

Թէս քո․ հեռացո՛ տէր զմար-
մինս իմ 'ի խորհրդոց չար-
եաց՝ և հաստատեա՛ յերկիւղ
բարեաց․ սուրբ և անարատ
կեալ առաջի քո յամ ժամ։

(ԾԴ․)

Զանօրէնութիւնս իմ ջնջեա՛
տէր․ 'ի յոյս բարեաց և յեր
կիւղ քո զմիտս իմ բևեռեա՛
լցեալ սիրով սպասել և ակն
ունել մեծի գալստեան քո։

(ԾԵ․)

Զօրացո՛ զիս տէր 'ի պատ-
ուիրանաց քոց՝ անսալ եր
կիւղիւ․ դողալ և սարսել 'ի

 դա

դատաստանաց քոց․ խնդրել զարդարութիւն և զերանունս երեսաց քոց․ առնուլ ըզ պարգևս շնորհաց քոց։

(ԾԹ)

Արձակեա՛ զիս տէր ՚ի կապանաց մեղաց իմոց․ և զչնացեալս մեղօք՝ վերըստին նորոգեա՛․ և զխաւարեալս ՚ի ցանկութենէ մարմնոյս լուսաւորեա՛՝ գնալով ՚ի ճանապարհս խաղաղութեան․ զի տեսցեն աչք իմ զփրկութիւն քո՝ զոր պատրաստեցեր տեց քոց։

(Կ)

Բժշկեա՛ տէր զանբժշկելի

հիւանդութ՟իս իմ. որ կար
կամեալ դնիմ ՚ի մահիճս մե
ղաց իմոց. և դեգերեալ կամ
՚ի գուռն երկրորդ սելով
մայ. ըսպասել և ակն ունիլ
մեծի գալստեան քո։

(ԾԲ)

Հրամայեա՛ տ՟ր ինձ ո՟չ զան
դամալուծին առողջանալ.
խորտակել զանկողինս ցա
ւոց իմոց. շրջել ընդ կամա
րարս քո. ՚ի տան տ՟ն և ՚ի
գաւիթս տ՟յ ծաղկել և ո՛չ
մեղանչել։ Խորտակեա՛ տ՟ր
զբռնութ՟ին սատանայի. հա՛տ



և

և իբրաց ընկեա՛ զզօրութի̃ն
նր̃ · արգե՛լ զյարձակումն նր̃
՚ի վր̃ իմ · կի տարապարհակ
վարեալ զմարմինս իմ, տանի
ընդ արձակութի̃ն ճանապար
հի՛ որ տանի ՚ի կորուստ և
յապականութիւն ·

(Ոտն)

Յիշեցո՛ տր̃ զբաղեալ և մո
ռացեալ մտաց իմոց զահա
ւոր և զսոսկալի դատաստան
քո · զպատիժ և զփառսն ար
դարոցն · և զաններելի տան
ջանսն մեղաւորացն · և նո
քօք զարհուրե՛լ դողացո՛ ըզ



մար

մարմինս իմ տեսանել զմահ հանապազ առաջի աչաց իմոց։

(Կ)

Ուսուցեա՛ որ զմարմինս իմ ընդ երկիւղ քո։ և ընդ սէր պատուիրանաց քոց։ և ընդ հրամայեալսն ՚ի նմա՝ երկիւղիւ լսել։ առանց ձանձրութեան կատարել միշտ՝ և մերկանալ ՚ի մեղաց և ՚ի ցանկութեանց կենցաղոյս։ և պայծառանալ վարուք առաքինութեան։

(ԿԱ)

Փրկեա՛ զիս որ ՚ի գաղտնաձիգ նետից սատանայի։

որ բաղում մեքենայիւք պա
տեալ պաշարէ զիս։ Սա՛ր
առեալ զմիտս իմ, վարէ 'ի
գերութի̃ն ցանկութեան մե
ղաց. առնելով ծաղր եւ այպն
կատականաց թշնամեաց.

(ԿԲ)

Ամրացո՛ զիս տէր յերկիւղ
քո. եւ զօրացո՛ զօրութե̃ քո.
զհիւանդութի̃ հոգւոյ իմոյ
առողջացո՛. եւ զցաւս մար
մնոյս բժշկեա՛. եւ զջերմու
թիւն սրտի քո՝ հաստատեա՛
'ի սրտի իմում, չարչարակից
լինիլ սրբոց քոց։

## (ԿԴ.)

Դարձո՛ զգերեալս 'ի սատա
նայէ. և զմեղզք վաճառեալս
եգիպտական և խիստ տան
ջանացն՝ փրկեա՛ 'ի բռնակալ
չար սպասաւորաց դիւացն.
և յեղէգնակոխ մեղացն հան
ցես՝ և արկցես զիս յեր
կիրն աւետեաց:

## (ԿԵ.)

Ընկղմեա՛ տ̃ր զթշնամին իմ
ընդ զօրութ̃ի փարաւոնի.
զի սպառնացեալ 'ի վ̃ր իմ
խորոխտայ. դարձուցանելով
զիս յառաջին յանցանսն ը̃

իշխանութե՛ իւրով՝ ծառայել
մեղաց և անօրէնութեանց։

(ԿԵ)

Զերծո՛ զիս տէր 'ի լերինս
քարանձաւի ․ կամ 'ի տեղի
անապատի ․ ուր և ողորմու-
թի՛ քո առաջնորդեսցէ ինձ
հանդիպիլ մեծի փառաց ան
ուան քո ․ տալ ինձ զթևս
աղաւնակերպ հոգւոյդ սրբոյ՝
թռչիլ և վերանալ խառնիլ
յերամս արդարոցն ։

(ԿԶ)

Ժամանեցո՛ զիս տէր յօթե-
ւանս արդարոց քոց․ և զհան

 գիստ

դիստ աշխատուե՟ն մե՟ք հարցն
պարգևեա՛ ինձ․ անոտես ա-
րա զկանդանս իմ և դասաւո-
րեալ պայծառացո՛ ընդ մե՟ս
և ընդ սիրելիս անուանս քո։

(ԿԷ)

Հաստատեա՛ մեր զխաղաղու-
թիւն և զպայծառութիւն
լուսոյ կենաց անձին իմոյ․
զի մի՛ խոտորեցիմ յաջ կամ
յահեակ․ և դատապարտիմ
յաւուր գալստեան քո՝ պա
հանջելով զյետին նաքարա
կիտն մինչ իսպառ։

(ԿԸ)

Մի՛ մերժեր զիս 'ի բազմա

գութ ողորմութեանց քոց· զապաշխարեալս 'ի քեզ ամրացո՛ աներկիւղ պահելով յամենայն որոգայթից սատանայի· զիմ՛ գերի վարեալ տանիցէ զմիտս իմ 'ի զբաղումն և 'ի չար ծառայութիւն։

(ԿԹ.)

Ուսո՛ զիս տէր առնել զարդարութի՛ն · խօսել զճշմարտութի՛ն · սիրել զորբունն, և ատել զաղտեղութիւն · խոտորիլ 'ի չարեաց, և գնալ 'ի ճանապարհս բարեաց·

(Հ.)

Արբեցո՛ զիս տէր յորսողաց՝

որք գան ի վ̄ր իմ, ըմբռնել
զիս 'ի մեղս և 'ի ծուլութե̄
անժուժկալութեան. մոռա
ցումն առնել յանցանաց ի-
մոց. և ո՛չ տալ յիշել զօր
հատուցման. և զսարսելի
պատասխանն որ ասէ. եր
թայք յինէն անիծեալք 'ի
հուրն յաւիտենից.

(ՀԸ.)

Կանգնեա՛ զիս տ̄ր 'ի դլոր
մանէ. և 'ի բազմամեղ ան
դընդային խորութենէ վե
րացո՛ և բարձրացո՛ թևօք հո
գւոյդ ս̄բյ 'ի խնդրուածս

հաճոյից. 'ի նորոգումն և 'ի
լուսաւորութիւն մտացս. 'ի
ջնջումն մեղացս. և 'ի կատա
րումն մե̄ր պատուիրանաց քոց։

(ՀԲ)

Խնդրեմ ո̄ր զերծեալ և
զկորուսեալ քո պատկերս.
որ 'ի մէջ աղբի և տղղմի մե
ղաց փակեալ կամ. գի՛տ ա
ծեալ աՙնելաՙն շնորհի քո և
դի՛ր 'ի գանձանակն առաջին
յորմէ անկան։

(ՀԳ)

Ա՛կ ո̄ր 'ի տեսութիւն հի
ւանդացեալ հոգւոյ իմոյ.

դի՛ր զձեռն քո ի վերայ իմ·
բժշկեա՛ ասելով· զօրացի՛ր
ա՛ռ զմահիճս քո· և երթ 'ի
տուն քո արդարութեան·

(ՀԳ.)

Ե՛կ տ՟ր 'ի խնդիր մոլորե
լոյս· որ յածեալ շրջիմ ար
տաքոյ հօտի պատուիրանաց
քոց· գազանաբեկ եղեալ և
քարավէժ մեղօք կառափնա
տիմ 'ի դիւաց· ըմբռնեա՛ և
ա՛ծ 'ի փարախ հայրենի· և
խառնեա՛ 'ի գառինս հօտի քո

(ՀԴ.)

Հետևեա՛ տ՟ր զհետ ձողոյ


րե

րելոյս 'ի քէն · արագապէս փութացիր · Հա՛ս և ըմբռնեա՛ զապստամբեալս 'ի ձայնէ կոչմանց քո · և դի՛ր 'ի բանտ կապանաց անխզելի սիրոյ քո ։

(ԺԹ.)

Մի՛ թողուր զիս Տէր 'ի հեռանալ սիրոյ պատուիրանաց քոց՝ և 'ի իլարուց առաքինութեց · այլ յորդորեա՛ առաւելուլ յամ գործս արդարութե · առանց մեղաց և առանց երկք խափանուածոց պաշտել զքեզ սրբութբ և արդարութբ առաջի քո զամ աւուրս կենաց իմոց ։

(Ի.)

(ՃԼ)

Ո՛ր մատներ զիս Տէր 'ի ցան-
կութեան մեղաց ․ 'ի քուն աչաց
և 'ի ցանկութեան մտաց․ այլ պա-
րըսպեա՛ երկիւղիւ ․ և ապ-
րեցո՛ յամենահնար չար դիւ-
աց և յաշխարհական զբօսանաց․

(ՃԽ)

Ո՛ր յապաղեր տալ ինձ ըզ-
փրկութիւն հոգւոյ և զջերմութիւն
սիրոյ ․ զկերակրոյ պարկեշ-
տութիւն և զմարմնոյ ժուժկա-
լութիւն․ զարտասուաց բղխումն
զանդադար աղօթս․ զհնազան-
դութիւն և զհամբերութիւն յուսոյ․

Յաղթեա՛ տէր հակառակա-
մարտին իմոյ. և զօրացո՛
զիս ընդդիմակաց լինել պա-
տերազմողին իվ՟ր իմ. և զգե-
ցո՛ ինձ զզրահն հաւատոյ.
պահօք և աղօթիւք սրբել
զաղտս ցանկութե՟ և զխոր-
հուրդս մարմնական. և առ-
նուլ զշնորհս փրկական։

(Ճ)

Տո՛ւր ինձ տէր տեղի ապաշ-
խարութե՟. աշխատութե՟
հանգիստ. խաղաղութեան
հոգի. և արդարութե՟ ճա-

նապարհ · ամրութեն զէն ·
հաստատութեն յոյս· և պըն
տութեան երկիւղ:

(ԶԼ)

Լնցօ՛ զիս տէր ընդ անհուն
անցից մեղաց՝ խորաթուիչ
ծովահեղձ ցանկական կեն
ցաղոյս · և շնորհեա՛ ինձ 'ի
լոյս աչացս՝ և 'ի մտացս տե
սութիւն · 'ի հանդիստ կե
նաց · 'ի հանդիպումն շնոր
հաց · 'ի շաւիղս ճանապար
հացն արդարութեն ·

(ԶԻ)

Շնորհեա՛ ինձ տէր լու

աչացս· արտասուաց հոսումն մեղաց սուգ· մտաց սրտի երկիւղ· ոսկերաց իմոց սարսափումն և դողումն վ̃ս տան ջանաց· կենաց ճանապարհ· և անդադար պաղատանս։

(ՁԳ·)

Սրբացո՛ զիս տէր 'ի պատուիրանաց պահպանութե̃· որով յայտնի ժուժկալութիւն 'ի մարտ պատերազմի· բանսարկուին յաղթութե̃· 'ի մարմնի մեռանիլ· և պայծառանալ 'ի հանդիսի·

(ՁԴ·)

Լեցո՛ զիս տէր երկիւղին

և զղջմամբ. արտասուօք և
հառաչանօք. սիրով և սըր
բութբ՟. շնորհօք և ճշմար
տութբ՟. գիտութեամբ և
ամ՟ առաքինութեամբ:

(ԶԵ)

Ջնջեա՛ տ՟ր զբազմութի՟
մեղաց իմոց. և թափեա՛ ըզ
մրուր դառնութե՟ յանցա
նաց. և պարարեա՛ զսիրտ իմ
արբմամբ ս՟բ հոգւոյդ. և ըզ
փշաբեր միտս իմ լցո՛ շնոր
հօք. զարգացո՛ և՛ի պտղաբե
րութիւն փոխարկեա՛:

(ԶԶ)

Արբեցո՛ տէր զշնորհս քո՛

զգութ և զողորմութ̃ն քո ՚ի
պաշտօնեայս քո. և տաճարա
ցո՛ զիս բնակարան լինիլ ամե
նա̃յն հոգւոյդ. մի՛ ևս ծա
ռայել մեղաց և ա̃պկնութ̃եց։

(ԶԼ.)

Բժշկեա՛ զիս տ̃ր ՚ի հպար
տութ̃ենէ և յանբարտաւանու
թենէ. ՚ի սնափառութ̃ենէ. ՚ի
մարդահաճութ̃ենէ և յոխակա
լութ̃ենէ. ՚ի նախանձու և ՚ի յա
տելութ̃ենէ և յա̃մ չարութ̃ենէ։

(ԶՐ)

Փրկեա՛ զիս տ̃ր ՚ի մարդկայ
ին գովեստից ՚ի փառաց և
՚ի

՚ի մեծարանաց. լոյս կարծե
լով զխաւարս՝ համբաւեն
իւր իմ բարի՝ զեղկելիս և
զողորմելիս: Համբաւեն զիս
առաքինի. և ես եմ արտաս
ուելի և անթիւ մեղօք լի:
Ծածկեա՛ զիս ՚ի լուսոյ սուտ
գովութեանց և երանութեանց.
զի ոչ գիտեն զմեղս իմ:
Երևիմ սրբուբ̃՝ և լի՛ եմ
աղտեղութբ̃. կերպարանիմ
առաքինուբ̃՝ և կեամ անա_
ռակութբ̃. փայլիմ երկիւ
ղածուբ̃՝ և վարիմ մարդա_
հաճուբ̃. ճանաչեմ զճշմար
տուն̄՝ և խօսիմ զստուն̄.

գտնեմ զարդարութիւն՝ և գործեմ զանօրէնութիւն։

(ՁԹ)

Բանեա՛ զիս տէր ՚ի մեղաց և ՚ի բամբասանաց. և թո՛ղ ինձ զանժուժկալութե̃ն և զծուլութե̃. զորկորստութե̃ և զդատարկաբանութե̃. զցանկութի̃ աղտեղութե̃. զհայհոյութի̃ և զա̃մ բիծս չարեաց։

(Ղ)

Կացո՛ զիս տէր հաստատուն անշարժ ՚ի տեղի փորձանաց պատերազմի. առանց երկիւղի քաջ և պինդ հաւատով և



յոր

յորդորէն սիրով՝ զօրավեր-
լինել ընդ եկելոց դիմացն
իմոց իմ․ զինեա՛ զիս ամրա
կուռ զինու քո՝ տալ պատե
րազմ և յաղթել թշնամոյն
հակառակամարտի․ որ կամի
խոպառ զիս որսալ․

(ԴՄ)

Ո ընկղմեալս մոր 'ի խորս
մեղաց հանիցես և բերցես
'ի լոյս պատուիրանաց քոց․
և առ քեզ կոչեսցես զհեռա
ցեալս 'ի քէն․ և թողցես ըզ
գործս իմ անառակութե․ զա
պաւինեալս 'ի քեզ մխիթա
րեսցես․ զարձակեալս 'ի կա

պոյ պատուիրանաց քոց՝ ըմբռնեմ զլուծ սիրոյ քո։

(ԿԲ)

Օգուտ սիրոյ քո որ միաւորեաց զիս. և զարգելեալս 'ի կապանաց բանտի՝ արձակեաց. և խորտակեաց զկապանս մեղաց իմոց. առաջնորդեաց ինձ 'ի ճանապարհ. և տեղի յարկից պատրաստեաց. և պսակեաց ընդ սբս քո։

(ԿԳ)

Հաղորդս արա զիս որ ածային սիրոյ քո. սիրել զպատուիրանս քո և գնալ 'ի ճանա



նա

նապարհս քո․ չարչարիլ մին
չև ցմահ վն՟ անուանդ քո․
մտանել՚ի փառս և դասիլ
ընդ ս՟բս քո․ և ուրախանալ
միշտ ընդ կամարարս քո։

(ՂԳ)

Գթա՛ ՚ի մեղուցեալ և յեղ
կելի անձն իմ տ՟ր․ խափա
նեա՛ զանառակ ցանկութի՟ս
իմ․ սրբեա՛ զաղտեղութի՟ մե
ղաց․ և քաւեա՛ զանօրէնու
թիւնս իմ․ բժշկեա՛ զվէրս
նորեալ հոգիս․ և առողջա
ցո՛ զհիւանդացեալ մարմինս
իմ․ ցրուեա՛ զչարն յինէն․
և ժողովեա՛ զբարիս և լի՛ց
զպակասութիւնս իմ։

(Գ.Ա.)

Առաջի քո անկանիմ և խնդրեմ զթողութիւն մեղաց իմոց. զպարտականս իմ ընկալ. և քաւիչ լեր յանցանաց իմոց. պայծառացո և լուսաւորեա զխորհուրդս և զմիտս իմ. կարողացո զմարմինս իմ անդադար կալ ՚ի փառաբանութիւն անուանդ քում սրբոյ.

(Գ.Ո.)

Ո անկեալս մեղօք կանգնեա տր. և զխոցեալս ՚ի թշնամոյն դեղատուեա. բարձ զցաւս մեղաց և վերացո ըզ



կս

կսկիծ յանցանաց․ յափշտա
կեալ ՚ի դառն մահճաց․ և
ազատեալ յանողորմ տանջա
նաց․ ՚ի մարմնական յղփա-
նաց հեռացո և ՚ի դասս ճգ-
նաւորացն դասեցո։

(ԳԼՒ)

Տէր վերակացու և պահա
պան անձին իմոյ ո՛վ տ̃ր իմ
յս̃․ պահեա զիս ՚ի դիւաց․
և փրկեա զիս ՚ի մարդկային
փորձանաց։ Հակառակողաց
յաղթեա և կացո զիս ՚ի մէջ
պատերազմողաց՝ քաջ և ըն
տիր լինիլ․ գործակցեա ինձ
լինիլ քաւարան մեղաց՝ և

համբերել վշտաց · առաքի
նաջան գործովք հանդիպել
քում ա͞ծային շնորհացդ ։

(Դ. Ը.)

Վայ ինձ տ͞ր՝ վայ ինձ · զի
մեղօք կործանեցայ · և մտօք
խմովք աղտեղացայ · ՚ի բար
եաց ունայնացայ՝ և ՚ի սիրոյ
ցամաքեցայ · ՚ի լալոյ խաւա
րեցայ՝ և ՚ի գնալոյ դադարե
ցայ ։ Ո՛չ ունիմ աչս լալոյ
և արտասուաց · ծփիմ տա
րակուսեալ · զի յոյս և ակն
բարեաց ո՛չ ունիմ ։

(Դ. Թ.)

Պանդգնեա՛ տէր զտարաբե

րեալ անձն իմ որ լի՛ եմ մե
ղօք և անթիւ յանցանօք . և
խարշեալ և տոչորեալ եմ ամ
անդամօքս . յոտից մինչև ցը
գլուխս ապականեալ . և չէք
ճնար բժշկութե . եթէ ոչ
'ի քէն տէր իմ յի . խոնար
հեա՛ առ վիրաւորեալս դե
ղատուութե . և մի՛ գարշիր
'ի չարահոտ ախտացելոյս ։

(Ձ)

Հեռացո՛ տր զբերան իմ 'ի
բամբասելոյ . և զլեզու իմ 'ի
չար խօսելոյ . զականջս իմ 'ի
չարաչար լսելոյ . և զձեռս իմ
'ի յափշտակելոյ . և զոտսիմ 'ի

 յա

յանաւակ գնացս երթալոյ. և զամ անդամս իմ զգաստացո՛ միշտ զհաճոյս քո կատարել։

(ՃԱ)

Մեղայ քեզ տէր մեղայ. զի յանցեայ զպատուիրանաւ քով. ՚ի լուսոյ կենաց ելայ և մտայ ՚ի խաւար մեղաց՝ ցանկանալով աղտեղութեց։ ՚Ի սիրոյ քո հեռացայ՝ ըմբռնեցայ ՚ի չարեն. և եղէ որդի կորստեան. ողորմեա ինձ բազմամեղիս բարերար՝ զի դու միայն ես մարդասէր։

(ՃԲ)

՚Ի քեզ տէր ապաւինիմ. որ

քաւարին ես մեղաւորաց. և
փախուցելոյս դարան. որ՛
փախստական ընթշնամին իմ։
Ոգնական զայլ ոք ո՛չ ունիմ
բայց զքեզ միա՛յն ունիմ պա
հապան անձին իմոյ. ՚ի վտան
գից փրկեա՛. ՚ի յորոգայթից
ապրեցո՛. և արժանի արա՛ զիս
լինել որդի յաւիտենին.

(Ճ՚Դ)

Ողորմեա՛ ինձ տ՟ր կենաց և
քաւիչ մեղաց. կատարիչ խն
դրրուածոց և արձակիչ կա
պելոց. բաշխօղ պարգևաց.
և տուիչ ա՟մ շնորհաց.

## (ՃԳ)

Լո՛ւր տէր զաղաչանս իմ. և ընկա՛լ զպաղատանս իմ. քաւեա՛ զյանցանս իմ. և կատարեա՛ զխնդրուածս իմ. արձակեա՛ զկապանս իմ, և բըժշկեա՛ զհոգի իմ. առողջացո՛ զմարմինս իմ և ուղղեա՛ ըզգնացս իմ. փութացո՛ զիս ժամանել յօթևանս սրբոց քոց։

## (ՃԴ)

Հալածեա՛ տէր զբազում ախտաժետութիւնս իմ. զցաւս ՚ի մարմնոյս՝ և զաղտ ՚ի հոգւոյս. զքուն ՚ի գլխոյս՝ և զյագումն



որկ

որկրոց։ Պահեա՛ զխորհուրդս
իմ անզբաղ. զսիրտ իմ մ̅ք.
և զմիտս իմ լուսաւոր. զցան
կութիւն՝ առ քեզ. և զյօժա
րութիւն՝ յաղօթս ՚ի տուէ և ՚ի
գիշերի։ (Ճ՚Օ)

Ողխեա՛ տէր ՚ի գլուխս իմ
աղբիւր վտակաց. և զանդս
մտաց իմոց առոգեա՛. զաղտ
յանցանաց իմոց լուա՛. և
սրբեա՛ զթարախ վիրաց իմոց
զփուշ մեղաց իմոց խլեա՛ և
տնկեա՛ զբոյս կենաց։ Աճեցո՛
տ̅ր զարդարութիւն և նուաստա
ցո՛ զանօրէնութիւն. մեռո՛ զմար
մնոյ ցանկութիւն՝ և նորոգեա՛
զհոգւոյս կենդանութ̅ի։

(ՃԼ.)

Կոչեա՛ տէր զմեղուցեալ անձն
իմ ՚ի քեզ. զի մերձենալ առ
քեզ ոչ իշխեմ. պատկառիմ
յամօթոյ՝ և զարհուրիմ ՚ի
գործոց իմոց. ոչ ունիմ առ
քեզ համարձակութիւն՝ զի ես
ինձէն եմ կորուսեալ։ ՚Ի մէջ
պատուիրանաց քոց հեռացայ
և մերկացայ ՚ի փառաց քոց.
այլ դու տէր գթա՛ յիս և ո
ղորմեա՛. զի ստեղծուած եմ
անարատ ձեռաց քոց.

(ՃԼԱ.)

Ո՛չ իշխեմ տէր անյոյս լինիլ



զի

զի ողորմած ես գըթած․ և
փառս անճառս խոստացար
դարձելոց մեղաւորաց․ այլ
ես զարհուրիմ և դողամ․ և
երկնչիմ 'ի բազում և յան
թիւ մեղաց իմոց․ զի պատ
րեալ խաբեցայ յորսողէն․ և
արդ զինչ լինիմ եղկելիս՝ որ
տարակուսեալ եմ 'ի կենաց։

(ՃԹ․)

Արա՛ զիս տր 'ի սուգ և յար
տասուս վն մեղաց իմոց․ զի
ծանրացեալ եմ անօրէնութե
բեռամբ՝ և յագեալ աղտե
ղի խորհրդով․ շա՛տ ներե
ցեր ինձ զի ո՛չ խրատեցեր

զիս 'ի մարմնի. արդ սարսեալ
դողամ, թէ ո՞չ մնան ինձ այս
պիսի չարիք: Աղաչեմ զքե՛
րերար տէր՝ մի՛ կոչեր զիս յա
տենի. և տանջանաց մի՛ մատ
ներ զիս. այլ փրկեա՛ 'ի հրոյ
գեհեննին. և 'ի վտանգիցն
ապրեցո՛. և ողորմեա՛ ինձ.
զի դու միայն ես մարդասէր:

(ՃԺ)

Ա՛յ ինձ տէր՝ զի ծփանք
տարակուսանաց պատեն զիս.
և զսիրտ իմ խռովեն. զոր ա
ղօթեմ ոչ գիտեմ: Աղմ֊
սեմ և ոչ իմանամ. շրթունք
իմ բարբառի՝ և միտք իմ

ճողոպրեալ յածի այսր և անդր և զկայումն ոչ ունի։ Այլ կամիմ զի իցէ անդ, բայց ոչ դադարի․ ոչ տեսանի արդեօք և ոչ ըմբռնի․ զոր աշխատիմ և ոչ ինչ օգտիմ․ որպ՟ ձայն հնչեալ պղնձի և ծնծղայի՝ թափուր և ունայն դատիմ․ և անպտուղ դատանիմ յամ՟ բարեաց։

(ՃԺԵ)

Ընկա՛լ տ՟ր զմոլորեալս՝ որ փախուցեալ կամ ՚ի լերինս որպ՟ ծառայ չար ՚ի տ՟նէ հալածեալ վ՟ մեղաց։ Այլ ՚ի ս՟բ եղբարց հրաժարեալ եմ․

՚ի

՚ի մէջ պաշտամանց հեռացեալ· զի սիրօղ էի մեղաց՝ և նախատինք կրօնաւորաց· ան յագ ՚ի մեղաց և ՚ի զրկանաց։ Անգութ էի աղքատաց՝ և հակառակ սպասաւորաց· անողորմ էի հիւանդաց՝ և անմխիթար աշխատողաց· չէի իսկ արժանի կալ ՚ի մէջ Ճգնաւորաց։

(Ճ՛Ժ·Բ)

Յանգո՛ տէր զշնորհս հոգւոյդ սրբոյ ՚ի վերայ իմ· որ միայն եմ ՚ի պատերազմի առանց օգնականի։ Արքեա՛ տէր զտաճար հոգւոյ իմոյ՝ և առխս լեր ընդ երեկոյս։ Բա՛ց զաչս

հոգւոյ իմոյ՝ և լուսաւորեա՛
զմիտս և զխորհուրդս իմ։
Տո՛ւր ինձ զօրութի՛ւն որ իմ
յս· և ընկա՛լ զօրհնաբանութի
բերանոյ իմոյ։ Ի խո՛ր քնոյ
գիշերոյ զարթո՛ զիս· գոհա-
նալ և օրհնել զքեզ՝ որով
զմեղս իմ քաւեցից։ Շնոր-
հեա՛ ինձ սուգ և արտասուս
լալոյ և սգալոյ· և անդա-
դար աղօթելոյ առաջի քո։

(Ճ՛ Ժ· Գ·)

Պատեա՛ որ զդատապար-
տօղն իմ որ յանդգնի ի մե՛ր
մարտ եդեալ ընդդիս ցանկու-
թե՛ և անժուժկալութե՛· ծու-

 լու

լութե՛ եւ որկորստութե՛ · փա
ռասիրութե՛ եւ մարդահաճու
թե՛ · բարկութե՛ եւ սրտմտու
թե՛ · ատելութե՛ եւ չարաչար
հայհոյութե՛ · սնափառութե՛
եւ սնապարծութե՛ · հպար
տութե՛ եւ ամբարտաւանութե՛ ·
բանիւք եւ գործովք եւ խոր
հրդովք զօրաժողով լինիլ
ի վերայ իմ · եւ ընկղմե զիս
՚ի խորս չարեաց ·

(ՃԺԳ)

Սփռեա՛ տ՜ր զշնորհս քո ՚ի
վ՜ր մասանց անդամոց իմոց
լցո՛ տ՜ր զմարմին իմ արիութե՛
եւ ժուժկալութե՛ · եւ զհոգիս

 իմ

իմ երկիւղին և դողմամբ․ ըզ
սիրտ իմ սիրով և արդարու-
թեամբ քո, և զմիտս իմ լուսով
և իմաստութեամբ քո․ զխորհուրդս
իմ հանճարով գիտութեան քո,
և զոտս իմ գնալ 'ի շաւիղս
արդարութեան․ և զբերան իմ
անդադար սաղմոսել քեզ
գոհութեամբ և օրհնութեամբ․ զաչս
իմ յորդաբուղխ արտասուօք
և զհոտոտելիս իմ հոտոտել
զհոտ գիտութեան 'ի կեանս․ ըզ
լսելիս իմ լսելով զձայնն ա-
ւետեաց որ ասէ․ թողեալ
լիցին քեզ ամենայն մեղք քո․

(Ճ․Ժ․Ե․)

Մինչև յերբ անսաս տէր

չար գործողին. որ ո՛չ յաղթի
իմով կորստեամբ. այլ հանա
պազ սկիզբն առնէ չարեաց
և իբաց կորզեալ խափանէ
զիս 'ի բարեաց և յառաքի
նութեց. և հեռացուցանէ
զիս 'ի սրբութեց. և 'ի յաւիտե
նից կենաց արտաքս հանէ
զիս: Խաւարեցուցանէ ըզ
լուսաւորութի աչացս. և
ապականելով գերէ զմիտս
իմ. և վարէ զիս 'ի չար ծա
ռայութիւն յանցանաց. և
'ի ձեռս անօրէն դահճացն
մատնէ զիս. և տանի 'ի տեղի
չարչարանաց. և արկանէ 'ի

 բանտ

բանտ կապանաց մահու․ կա
ցուցանէ ՚ի մէջ խաւարասէր
սպասաւորաց․ և ՚ի տուունս
մեղաց կապէ զիս․ և արդ
ես եղկելիս զինչ լինիցիմ
եթէ ոչ դու տէր օգնես ինձ։

(Ճ՛փ․Օ․)

Տե՛ս տէր զգալիս և զողբալիս
զպաղատելիս և զեղկելիս․
ինձ ողորմեա՛ անօրինելոյս․
և շնորհեա՛ ինձ յորդ արտա
սուս ՚ի գիշերի, և զնշոյլ
շնորհաց քոց յառաւօտի։
Բա՛ց զխաւարեալ աչս սրտի
իմոյ՝ և բժշկեա՛ զհիւանդա
ցեալ հոգիս իմ․ ընկա՛լ ըղ

դարձ մեղաւորիս. և մի՛ բարկանար բազմամեղիս տր իմ յս. և քանզի անթիւ ունիմ զչարիս՝ ընջեա՛ յինէն և տուր ինձ զշնորհս բարեաց։

(ԼԸ)

Համարձակիմ տէր աղօթել առ քեզ. խնդրեմ և ոչ իմանամ. զօգտակարն հոգւոյս յայտնեա՛ ինձ ողորմած տր զկամս բարիս. և ուսո՛ ինձ զպատուիրանս քո։ Ո՜ բարիս զոր ոչ խնդրեմ և իմանամ տր՝ ինձ տուր. և եթէ ոչ գործեմ զչարիս, բարի՛ արա ինձ տր. և եթէ ոչ խնդրեմ

զողորմուն̃, ողորմուն̃ շնոր
հեա՛ ինձ տ̃ր • և զհեռացեալս
առ քեզ կոչեա՛ • և եթէ ոչ
կամիմ, բռնաւորեա՛ և ՚ի քեզ
կորզեա՛ • և եթէ ոչ դառնամ
դարձո՛ զիս • և եթէ ըմբռ
նիմ յումեքէ, զերծո՛ զիս •
եթէ յերկրաւորս զբաղեցայ
՚ի խորհրդս հոգևորս զբաղե
ցո՛ զիս • եթէ այսր և անդր
գնալ ցնդիմ, մի՛ թողուր զիս
մինչև ըմբռնեալ տարցես ՚ի
տեղի յարկի փառաց քոց։

(ՃԺԲ)

Ա՛ի՛ հայիր տ̃ր իմ յեղկեալ
սիրտս և ՚ի զաղրասեր մար

մինս․ զի հող եմ և մոխիր․
սիրեմ զերկրաւորս եւ ո՛չ փա
փագիմ նայել յերկնային
այլ միշտ հեշտանամ ՚ի չարիս
և ո՛չ տեսանեմ զանվախճան
փառսն։ Տէ՛ր ո՛չ յիշեմ զառա
ջինն որք հայրսն զերանելին․
այլ ՚ի տիղմն աշխարհիս թա
ւալիմ․ և ո՛չ մաքրեալ վերա
նամ դասիլ ընդ առաքինիսն։
Տէ՛ր զի մոռանամ զերկիւղ
դատաստանին․ և ո՛չ դողամ
յահագին դառն տանջանացն
որ կայ պահեալ մեղաւորաց․
և ես ծուլանամ անհոգ լի
նելով ՚ի փրկութենէ կենաց․

շնորհեա՛ ինձ տէր սուգ և կոծ անհանգիստ և արտասուս ապաշխարանաց։

(ՃԺԹ)

Մ՛ի՛ հանդիմաներ զիս տէր յաւուրն մեծի ահեղին․ և մի՛ յատենի հրապարակին կացուցաներ զիս ամօթալի․ և ՚ի տեղի ատենի մի՛ խայտառակեր զիս․ և մի՛ կշտամբեր յատեան դատաստանին․ և մի՛ թողուր ինձ զո՛չ գիտեմն լսել․ և զահաւոր բարբառն ահաբեկ՝ որ ասէ․ երթա՛յք յինէն ՚ի հուր գեհենին։ Ա՛յլ մի՛ իբաց մերժեր

ընդ վատ և ընդ չար ծառայի.
և՚ի ձեռն անողորմ կապողի
մի՛ մատներ զիս. և մի՛ տար
կերակուր որդւանց Թունա
ւորաց ՚ի մէջ բորբոքեալ բո
ցոյ. և մի՛ արկաներ զիս՚ի խա
ւար սառնամանեացն տար-
տարոսին: Այլ փրկեա՛ զիս
՚ի սաստիկ կայծականց հրոյ.
՚ի բոցեղէն գետոց արշաւա
նացն. ՚ի սաստիկ լալագին և
խիստ տանջանացն. և յող
բոց տարակուսանաց. ՚ի կափ
կափելոյ ատամանցն և՚ի սար
սռելի կսկծանաց. ՚ի տօչոր
մանէ խաւարային բոցոյն,


և

և՛ի դժնդակ դատն աղէտից
խորովելոյն․ ՛ի բոցածաւալ
և՛ի շրջապատ հրոյն․ և՛ի կող
կողաձայն և յանդնդր վայոյն
փրկեա՛ և ազատեա՛ զիս տր։

## (Ձ՛Ի)

Բազմացա՛ն տր անօրէնութ
իւք իմ․ իբրև զբեռն աղի
կամ կապարի՝ ճզմո՛ւմ է ախտ
՛ի հոգիս իմ․ և անխտիր եմ
՛ի մեղս մարմնոյ․ և զանազան
չարեօք լցեալ եմ։ Բայց ա՛յլ
ինչ ունիմ վատթարագոյն․
զանզգջութիւն մարմնոյ՝ որ
քան զամ չարիս է դառնա
գոյն։ և զի յաղօթելն իմում

ձանձրանամ. և՛ի սաղմոսելն
ոչ իմանամ. ՚ի խնդրել զե
րանութին պղերգանամ. և յեր
կիւղէ շնորհաց դատարկա
նամ. տկարանամ մարմնովս՝
և արձան աղէ սիրտ իմ լինի.
և ոչ ծագէ ՚ի ներքս լոյսն
անշիջ.նելի. և յաւուրն չարի
ոչ սարսեալ դողամ.

(ՃԻԸ)

Շնորհեա՛ ինձ տր՝ երկիւղ
սրբութե̅ և սգոյ. և յորդո
րեա՛ առիս աղբիւրս արտաս
ուաց. թեթևացո՛ զծանրու
թի̅ բեռանցն իմոց. և ածե
ցո՛ առիս սուրբ աղօթս:

Փութացի՛ր տէր եւ եկ ՚ի խնդիր մոլորելոյս. որ մերձեալ եմ ՚ի վախճան կորստեան. վասն զի խաւարեցայ ՚ի լուսոյ. եւ ՚ի խիրոյ պատուիրանաց քոց խափանեցայ. ՚ի չար թշնամոյն յաղթեցայ՝ եւ նուաղեցայ յերկիւղէ քումմէ:

Տապալեցայ ՚ի չար խորհրդոց չարին՝ եւ ցամաքեցայ ՚ի շնորհաց արտասուաց սրոյ քո. խաբեցայ յունայն բանից եւ ՚ի լուսաւորութենէ մտաց մոլորեցայ. աղտեղացայ մեղօք՝ եւ զօր վախճանին մոռացայ:

(ՃԻԲ)

Տարակուսիմ անյոյս լինե

րով՝ որ ո՛չ գոյ հնար ապաշ
խարութե. զի մարմնովս տըկա
րացայ՝ պակասեալ 'ի զօրու
թենէ. և ծերացեալ նուազե
ցայ. Սակայն 'ի քեզ ապաւի
նիմ տ̅ր յ̅ս հասի՛ր յօգնու̅ի
ծանրաբեռնեալ ընկղմելոյս
և ազատեա՛ զիս 'ի չարեաց.
որ ազատիչդ ես 'ի յանցանաց.

(Ճ՛ԻԲ.)

Ընկա՛լ տ̅ր զդոյզն շաղփաղփ
աղօթս իմ. որ կամ առաջի
քո դատապարտեալ. այլ և
ծոյլ 'ի զգաստութենէ. մո
լորեալ եմ 'ի մտաց. և յեր
կիւղէ ունայնացեալ եմ։



Ընե

Ներանիմ այլ ընդ այլոյ բո՛ր
բանջէ. աչք իմ պշնու. և
միտք իմ զբաղնու։ ոչ ան-
զբօս աղօթեմ. և ոչ սրտի
մտօք խնդրեմ. ոչ հաւատով
առ քեզ գոչեմ. և ոչ երկիւ-
ղիւ կարդամ. ոչ արտասուօք
հայցեմ, և ոչ դողամ և սար
սիմ վն աւուրն պատասխա
նատուութեանց։ Այ՛ արդ տ՜ր՝
մի՛ անսար. այլ փութապէս
ա՛րկ յապաշխարութի՜ և 'ի
բովս մաքրութե՜ հրոյ՝ սրբ
բեալ և ազատեալ 'ի մեղաց։
Մեծա՛ւ ջերմամբ եռացո՛
և 'ի յորդոր արտասուս և 'ի

 պա

պաղատանս և՛ի խնդրուածս. և տպաւորեա՛ յիս զառաջին լուսաւորութեան կերպարանին.

## (ՃԻԲ)

Ողորմեա՛ տէր մեղաւորիս՝ յանցաւորիս անթիւ բազմութք. և դարձո՛ յապաշխարութի զգերիս վտարանդեալ. և մո՛յծ զիս յարքունական փառսն: Առաջնորդեա՛ ինձ զվերին ճանապարհն գալ առ քեզ. զի եթէ դու ոչ առաջնորդեսցես ինձ, ես ոչ կարացից գալ: զի դու իսկ հրամայեցեր. եթէ ոչ ոք գայ առիս՝ եթէ ոչ հայր իմ ձգեսցէ

ցէ զնա։ Եւ արդ տէր իմ
գթած՝ մի՛ յիշեր զմեղս իմ
յաճախս լրբութեան՝ և զանց
առներ՛ ի ծառայէս քումմէ.
մի՛ թողուր զիս մնալ ՚ի նոյն
չարիս՝ և՛ ի կեանս աշխարհիս
պատաղիլ. այլ որպէս ընթացեալ
զկնի ծառայի փախելոյ՝ այս
պէս դարձուցանելով զիս՝
թողցես զյանցանս իմ. և
արասցես հաղորդս սրբոց
կամարարաց քոց։

(ՃԻԱ)

Դարձո՛ տէր զցասումն բար
կութեան քո յինէն. որ մեղօք
բազմօք իմովք տրտմեցուցի

զքեզ։ Ողորմեա՛ ապստամբելոյս 'ի քեզ. և զանձնարին դիզեալ կոյտս մեղաց իմոց ցրուեա՛. Է՟ քաղցր լծոյ ծ՟այութե՟ քո բնակեա՛ զմիտս իմ։

(ՃԻԶ.)

Պարգևեա՛ ինձ տ՟ր յ՟ս զլալումն դաւ՟թի՝ և զողբումն Երեմիայի. զհառաչումն Պետրոսի՝ և զյորդառատ վտակս արտասուաց կնոջն պոռնիկին. զի նստեալ լացից անդադար 'ի տու՟նջեան և 'ի գիշերի. զի արժանի եղէց սրբիլ 'ի յաղտոյ և 'ի թարախոյ. և յորդնալից վիրաց զերծանիլ. և 'ի

բազմաբեռն չարեաց թեթե-
անալ՝ և դասիլ ընդ սրբս քո։

(Ճ՛ԻԱ)

Ողորմիլ ինձ Տէր մի՛ յամե-
նար· զի առանց քո վաս-
տակելոյ յիս՝ ոչ երբեք գոր-
ծի բարի· և ոչ սերմանեալն
յանդս հոգւոյ իմոյ բուսա-
նի· զի սերմն բանի քո որ յիս
սերմանեցաւ՝ 'ի չար թշնա-
մոյն քաղեցաւ· և բուսեալն՝
ոմն 'ի տապոյ չորացաւ· և ոմն
'ի մէջ փշոցն անկեալ՝ հեղ-
ձեալ ցամաքեցաւ։ մշակելով
քո յիս Տէր՝ ածեա՛ զերկուս
աչս եզանց որ յիս՝ արտաս-
ուս

ուագոչ ձայնիւ պաղատիլ առ քեզ յարաժամ. զի արժանի՛ գտայց ողորմութեան քում։

(Ճ՛ԻԲ)

Շնորհեա՛ տէր զխաղաղութիւն եկեղեցւոյ քում մեզ. և տամ հանդարտացելոց Թագաւորաց և իշխանաց՝ զօրաց և զօրավարաց ՚ի ճակատու պատերազմաց՝ յաղթել անօրէն բռնաւորաց։

(Ճ՛ԻԳ)

Ողորմեա՛ տէր առաջնորդաց եկեղեցւոյ՝ հայրապետաց և վարդապետաց. երիցանց՝

 սար

սարկաւագաց՝ դպրաց՝ և
ա՟մ ուխտի մանկանց եկեղե
ցւոյ. առնել զերանունս և
զարդարուն յա՟մ ժամ. հով
ուել զժողովուրդսքո. որք
նիւ վասն հոգւոց ն՟ց . սաե
րով, ահաւասիկ ես և ման
կունք իմ զոր ետուր ցիս:

(ձ՛Լ)

Ողորմեա՛ տ՟ր յ՟ս ք՟ս կարօ-
տելոց և տարակուսելոց.
որբոց և այրեաց. տնանկաց
և տանց հաւատացելոց. կեն
դանեաց և ննջեցելոց. և որք
ընծայաբերք են եկեղեցւոյ:
Աղքատաց՝ կերակրողաց՝

ողորմածաց՝ երկիւղածաց՝
և հիւանդաց · նաւորդաց
և ճանապարհորդաց · խոս
տովանողաց եւ ապաշխարո
ղաց · և անդարձ մեղաւո
րաց · ողորմեա՛ տր և դարձո՛
զնոսա յապաշխարութիւն ։

## (ՃԻԱ)

Ողորմեա՛ տր եղելոց մերոց
կրօնաւորաց · և միանձանց
ճգնաւորաց · և որք յանձն
առարին զինքեանս յաղօթս
մեր յիշել · ողորմեա՛ բարե
րար և ըստ իւրաքանչիւրոց
պիտոյից ։ Բաշխեա՛ առատա
պէս զշնորհս հոգւոյդ սբյ

 ՚ի

'ի վերայ ամենեցուն սոցա · և զարդարեա և միացո 'ի սէր ա̃ծութե̃ն քո ·

## (ՃԼԲ)

Ողջեմ տ̃ր յ̃ս և անկանիմ առաջի քո տ̃ր խաչին · բարեխօսութե̃ սորա զաղաչանս իմ ընկալ · և զխնդրուածս իմ կատարեա · և զօրութե̃ սորա զօրացո զիս 'ի կոչմանս յոր կոչեցայ · և 'ի պատուիրանս քո զոր ուսայ ։ Տուր ինձ տ̃ր զսա 'ի զօրութի̃ և 'ի ժուժկալութի̃ 'ի զգաստութի̃ և յառողջութի̃ լինել պահապան անձին իմոյ 'ի

տուընջեան և՛ի գիշերի և
յամ ժամու. ՚ի ննջել և՛ի
յառնել. ՚ի գնալ և՛ի դադա
րել. ՚ի գործս և՛ի վաստակս.
յաղօթել և՛ի պահել. և ըղ
հաճոյս կամաց քոց կատարել
Եա եղիցի ինձ բերդ ամուր
և աշտարակ հզօր երեսաց
թշնամւոյն. զարդարեա զիս
սովաւ ՚ի զարդ հոգեղինաց
և՛ի լոյս իմանալի: Եւ յա
ւուրն ահեղի բարբառոյ
գաբրիէլի՝ յերևիլ սբյ խա
չին՝ լուսաւորեա զխաւա
րեալ հոգիս. վերանալ լու
սով ընդ առաջ անմահ փե

սայիդ․ խառնիլ յերամս հայ
ըստաց․ և՛ի դասս մարտիրո
սացն․ և՛ի գունդս հրեշտակաց։

(ՃԼԳ)

Բարեխօսութբ սրբուհւոյ
Աստուածածնիդ և անարատ
միշտ կուսիդ․ և Յովհան
նու կարապետին․ Ստեփան
նոսին առաջին մարտիրոսին․
և սրբոյն Գրիգորի լուսաւոր
չին․ և ամենայն սրբոց վկայից քոց՝
լո՛ւր ինձ եղկելւոյս։ Ընդ
գլորելոյս ձեռնտու լեր․ և
մոլորելոյս առաջնորդեա՛․
և՛ի խաւարէ հանցես զիս

'ի լոյս. և հոգւոյ իմոյ ազա
տութի՛ շնորհեա՛։ Հաստատեա՛
'ի սէր քո. և բևեռեա՛ յեր
կիւղ քո։ զտաճար հոգւոյ
իմոյ մաքրեա՛. և առիս օթե
վանեա՛։ Փակեա՛ զդուռն
մեղաց իմոց. և պարըսպեա՛
շուրջանակի յոսոխէ իմմէ։
Ի՛ 'ի մարդոյ չարէ և յան
իրաւէ փրկեա՛ և ազատեա՛
զիս առաքինութեամբ. և
պարգևեա՛ ինձ զանձառ ե
րանութի՛ քո։ Կենդանեաց
մերոց ողորմեա՛. և զհոգիս
ննջեցելոց մերոց պայծառա
ցեա լուսաւորեա՛։

(ՃԼԳ)

Բարեխօս առ քեզ ունիմք զառաքեալսն և զմարգարէսն. և զա̃մ ս̃բ մարտիրոսն. զհայրապետսն և զվարդապետսն: Լուր աղաչանաց ն̃ց և ազատեա́ զիս 'ի մեղաց իմոց. տընկեա́ յիս հոգի շնորհաց. և յորդորեա́ զիս գործել: 'ի ծուլանալն իմում բռնաւորեա́. խափանեա́ զիս 'ի չար գործոց` և սերմանեա́ յիս պտուղ բարեաց:

Քաջալերեա́ զիս 'ի նեղութ̃ե իմում. մխիթարեա́ 'ի վշտի. արժանի' արա զիս տ̃ր իմ և

 ա̃ծ

ա՟ծ իմ յ՟ք՟ լինիլ քեզ խա
չակից մինչև ցմահ. որ՟պ զի
՚ի հեշտութ՟եց աշխարհիս հրա
ժարեցիմ. և եղէց երանել՟եցն
դասակից. և ա՟ապակին ե
ղէց հաղորդ. և՚ի դրախտին
վայելեցից զկեանս անմահս:

(ՃԼԱ)

Յաւուրն ՚ի վախճանի հրեշ
տակ բարի ինձ առաքեա. և
քաղցրութ՟ ա՟անդել զհոգի
իմ. ընդ ուղղոյ ճանապարհի
առաջնորդեա. և զգաղանն
դարանակալ կործանեա. ան
ցո զիս անխռով ը՟ օդս խա
ւարայինս. և զերծո ՚ի չար

ժանից դաշանին․ ապրեցո՛
և աներկիւղ պահեա՛․ և՛ի
կայանս ս͞բցն հնգո՛, սպասել
և այն ունիլ զալատեան քո։

(Ճ'Ի.Օ.)

Յորժամ գաս յերկնից ա-
հեղ փառօք և անթի՛ւ դա
սուք հրեշտակաց, զարհու-
րեալ դողան առ հասարակ
տարերք ա͞մ՝ երկնայինք և
երկրայինքս․ յակնարկել քո
զօրութե՛դ՝ սարսին յահեղ
փառաց անմահ թագ՛որիդ․
և անճառ դատաստանիդ և
աններելի պատուհասիդ։

 Յայնմ

(ՃԼԱ)

Յայնմաւուր և զիս ընկալ տէր ընդ արդարս և ընդ կատարեալս քո. և կարգաւորեա ընդաջմէ դասուն. և պսակեա ընդ սրբս քո. և շնորհեա ինձ զկեանս յաւիտենից. և զանձառ բարիս քո պարգևեա ինձ. և քեզ փառք արարողիդ՝ և պարգևողիդ իմոյ բարեաց։

(ՃԼԲ)

Յիշեա տէր զհոգիս ննջեցելոց մերոց յաւուր մեծի քում գալստեանդ՝ յորժամ

 գաս

դաս յերկնից անճառ փա֊
ռօք · ահեղ և սոսկալի զօ
րօք · հրանիւթ և հողեղէն
զուարթնօք ։ Ահաւոր հուր
առաջի քո ընթացեալ տարա
ծանի · կիզէ զերինս՝ և հա
լէ զբոլորս · և զարարածս
ամ աՀասարակ տապալէ ։
Յայնմ աւուր ահեղին ո֊
ղորմեա ինձ մարդասէր · զի
գին սբ արեան քո եմ ։
Յորժամ զաղբիւրս ցամա֊
քեցուցանես՝ և զգնացս գե
տոց դադարեցուցանես · ըղ
ծովու ջրոյն զանբաւութի
սպառեցուցանես · զլուսա

 ւորս

նորս խոնարհեցուցանես .
փողն ահագին ը̃ տիեզերս
ամ ինչի . և զմեռեալսն զամ
զարթուցանէ . և զաշխարհս
ամ դողացուցանէ . և արա
րածք ամ յարուցեալ կան
առաջի ատենի քո, Յայնժամ
դնես զդատողական աթոռ
քո . և ընդ քեզ բազմեցու
ցանես զերկոտասան առա
քեալսն ։ Նաչառ դատաս
տանաւ դատես . և յամենե
ցուն արդարութի պահանջես
զկամարարս քո պատուէնս՝ և
զապստամբեալսն ՚ի ձայնէ
կոչման քո՝ պատժես . և

 զար

զարդարսն փառաւորես· ըղ
մարտիրոսն և զնր վկայսն
պսակես· զիմաստուն սուրբ
կուսանսն զարդարես · և
յիմար կուսանացն՝ զառա-
գաստին դուռն փակես· և
'ի փառացն և յերանութեցն
հալածես ։ Ոչխսն քո
ընտրես, և զայծիսն 'ի քէն
իբաց մերժես· և'ի դեհենն
առաքես՝ ուր լալումն է ա-
ճաց · և դառնագոյն կսկիծ
ահեղ տանջանաց · և հրէ-
ղինաց չար որդանց Թի-
նաւորաց՝ կոտտողացն 'ի
կրճտումն ատամանց։

(ՃԼԹ)

Մ՛որդ՝ գթա՛ և յիս յայնժամ մ՛արդասէր տ՟ր և բարեր՟ր փրկիչդ իմ յ՟ս ք՟ս. և ողորմութե՟ քով գթասցիս 'ի հոգիս ննջեցելոց մերոց՝ որք հա՛ւատով 'ի քեզ ննջեցին. զորս յարուցե՟լ կացուսցես աւջին ահաւոր քո մեծի դատաստանիդ՝ յայն տիեզերական հրապարակին ահեղ։

Յորժամ յայտնին գործք բարւոյ և չարի անթաքչելի 'ի մէջ ատենին՝ յայնմ աւուր ահեղին թողութի՟ շնորհեա՛ յուսացելոց քոց. որք յանուն

քո սուրբ ննջեցին յերկրի.
զոր գնեցեր պատուական ա
րեամբդ քո։ Ս՛ ննջեամ զձե
ռագիր ամենայն մեռելոցս
'ի քեզ. և թող զպարտիս յան
ցանաց ամ հաւատացելոց.
զկամայից և զակամայից.
ընդաջմէ քումմէ դասեա.
և զերանական զձայնն 'ի լսե
լիս ամ հաւատցելոց աւետա
րանեա ասելով. եկայք օրհ
նեալք հօր իմոյ ժառանգե
ցէք զյաւիտենից բարութին

(Ճ՟Խ)

Որդ՝ տր իմ և ած իմ յս
քս՝ բարերար ողորմած և

մարդասէր՝ անոխակալ ես
ան յիշաչար՝ ընկալ զաղօթս
և զխնդրուածս իմ. որպէս
պաղատիմ և հայցեմ 'ի քէն
վ͞ս իմ և վ͞ս ա͞մ հաւատացե
լոց. մի՛ դարձուցաներ զե
րեսս քո 'ի ժողովէս. այլ խո
նարհեա՛ց յաղաչանս իմ. և
լո՛ւր ինձ մարդասէր. և ցո՛յց
յիս զսովորական քո մարդա
սիրութեդ զողորմութիւն.
և խնայեա՛ 'ի մեղուցեալ ծա
ռայս քո: Ն՜ կարգեա՛ զիս
ընդ աջմէ դասուն. և մի՛ կա
ցուցաներ 'ի ձախմէ ընդ
ունն՝ որք զայրացուցին զքեզ



և

և մի՛ պահանջեր յինէն զան
համար պարտիս յանցանաց
իմոց։ Այլ մի՛ դատապար-
տեր զմեղաւորս յայնժամ.
և մի՛ յայտնեսցին ծածուկք
գործք ամբարշտութ̅ե իմոյ
յանցանաց յանաչառ ատե
նին՝ հրեշտակացն տեսանո
ղաց և հրեշտակապետացն
և ամ̅ սրբոց քոց սիրողաց.
այլ յաղթեաւ ՚ի քումմէ
մարդասիրութենէդ՝ արասցես
այցելութ̅ի մեղուցեալ ծա
ռայիս քո. և մի՛ ըստ չար գոր
ծոց իմոց հատուսցես ինձ։
Այլ մի՛ հրամայեր կապեալ

 ոտ

տուխք և ձեռօք հանել 'ի
խաւարն արտաքին. ուր լալ
աչաց է և կրճտել ատամանց
այլ ըստ քում գթութեան
և բարերարութեան և անյի
շաչարութեան՝ ողորմեա՛ ինձ
բազմամեղիս։ Յայնմ աւուր
զերծո՛ զիս յամօթոյն յաւ
իտենից. և փրկեա՛ զիս յան
վախճան տանջանացն. ապ
րեցո՛ զիս յաններելի պատու
հասիցն՝ և բա՛ց ինձ զդուռն
ողորմութե՟ քո. և մի՛ փակեր
զդուռն արքայութե՟ տ՟ր իմ
տ՟ր՝ ա՟ծ իմ ա՟ծ յ՟ս ք՟ս։
Արժանի՛ արա զիս զան

արժանս յաւուրն յայնմիկ
երանութեանց և անապակա
նութե պարգևաց լուսոյ.
և անսպառ յաւիտենից ու
րախութեանց. և բարեաց
հատուցմանց սրբոցն և ար
դարոցն. և զփառս երանե
լեացն վայելել միշտ: Օ՜ ի
մրտից արժանապէս յառա
գաստ անմահ փեսայիդ.
և ժառանգեցից զանսպառ
բարիսն ընդ ա̃մ սուրբս քո՝
մաքուր և յստակ և ս̃բ սր
տիւ՝ համարձակ երեսօք:
Անհատ տեսից զքեզ ընդ
հրեշտակս. և ընդ սուրբ

 սր

սիրօղս վայելեցից զանհաս
զանճառելիդ և զանեզր լոյս
Երրորդութեդ՝ գոհանալով։
և զուգահաւասար արասցես
ընդ նըս քո յօրհնաբանու-
թիւնս միշտ արժանապէս․
հանապազ անծայրին անբաւ
ուներ լուսով քո պայծառա-
ցո։ Եւ անդադար երգով
Փառաւորեցից զամենաւբ
Երրորդութիւնդ․ այժմ
և յաւիտեանս յաւիտենից
Ամէն։

1756